

գրենք հրամայականը եւ ոչ թէ կարդայ, պատճառը այն է որ հրամայականները մեր լեզուին մէջ՝ կը շինուին կատարեալի արմատէն, որ է բայի մը կատարեալ եւ զակի երրորդ ղէմքը:

կարդացի, կարդացիք, կարդաց. երգեցի, երգեցիք, երգեաց.

Հրամայականը կը շինուի՝ ձգելով ցոյիւրը. կարդա՛, երգեա՛: Ասոնք ածանցեալ արմատներ են. պարզ արմատը՝ միեւնոյն ատեն հրամայական ալ է. տեսի, տեսեր, տես. մոտ, էլ, էլ, պտղ, քեր, քած, հսե, խած, եւն, եւն: Ասոնք բոլոր ու նմաննէրը թէ՛ կատարեալ եզակի երրորդ ղէմք են, եւ թէ՛ հրամայական. կրաւորակերպ ներուսն մէջ — իր ածանցը կ'աւելցուի. փախ—իր, կոր—իր, թաք—իր, մատ—իր, զարթ—իր, եւն, եւն:

կարդա—ն անփոփոխ է աշխարհարարի մէջ, իսկ երգեա—ն կ'ըլլայ երգե՛, որովհետեւ մեր լեզուն ե—ով բառ չի վերջացուեր, հին ատեն քանի մը հոգի փորձեր

են ընել, բայց իսկոյն խափանուեր է: Բառավերջի եւ, եւյ պէտք է փոխուին —ե—ի. հրեայ—հրէի, գոնեա—գոնե, անդեայ—անդեոյ, գրեա—գրե՛, եւն, եւն:

Պրանաացիք շալակ մը Ե ունին. Ե, Ե, Ե, Ե, Ե. խորհուրդ պիտի տայինք Պրոֆ. Աղանցի, որ դիմէ փութով ֆրանսական Ակադեմիային, քանի որ հոն քովիկը կը գտնուի, եւ այդ բեռ մը Ե—երը վերածել տայ մէկի: Ակադեմիան՝ իր իմաստուն խորհուրդներէն լուսաւորուած՝ անմիջապէս պիտի համակերպի, եւ հաւանական է՝ զինքը անզամ եւս ընէ Անմահատանին, կախելով վիզէն չեզեռը...

Իսկ մենք վերջակէտը ղնելէ առաջ պիտի յորդորէինք՝ եթէ ներէ Պրոֆ. Աղանցը, որ լաւ կ'ըլլայ՝ երբեք ուղղագրուած մասին խօսք չընեն, ոչ ինքը, եւ ոչ ալ «գնում է, գալիս է» ըսողներուն ամբողջ ճեղքը, կը բաւէ մեր զմայելի լեզուին քաջածն իրենց կործանարար, քանդիչ ձեռքերէն:

Հ. Ա. ՂԱԽԻԵԱՆ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՂԱԶԱՐԱՅ ՓԱՐՊԵՏԻՈՅ ԺԱՌԷՆ

«Առն եղեալ որդի» ՈՒՂՂԵԼԻ «Այս ներքին արտի»

Վահան Մամիկոնեան զՂազար կարգեր էր վերատեսուել կամ վանահայր կաթողիկէ վանքին, Վաղարշապատ քաղաքի մէջ: Յունական գիտութեամբ զարգացած, և մտաւոր ճոխութեամբ առաւելեալ քան զշատերն իւր ժամանակի արեղաներէն, որոնք չառնելով անոր վայելած փառքը և համբաւը, թէ ժողովրդի և թէ որերոյ մօտ, այնչափ ըրին որ զգուելով թողուց վանքն և հեռացաւ գնաց Միջագետք Սիւր քաղաքը: Բայց իւր նախանձորդները, փոխանակ հանդար-

տելու, սրեցին լեզուներն և սկսան անուր գրպարտութիւններով դատափետել և վարկարեկ ընել Հայաստանի ժողովուրդի և մեծամեծներու մօտ: Զայդ իմանալով Ղազար սատիկ կը զգացուի, մանաւանդ կը ցաւի չըլլայ թէ կորսնցնէ Վահանի համակրութիւնն և բարի համբաւն, որով երեւելի եղած էր Հայոց հոգեւորական դասուն մէջ:

Եւ թէպէտ Փրկիչը կը պատուիրէ հեզ, ներող, անոխակալ և խոնարհ ըլլալ «ծառայ անպիտան» խոստովանելով իր անձը, սա-

կայն կը հարկադրուի ակտմայ մոռացու-
թեան տալ այդ ամէնը և գրիչը ձեռք կ'առ-
նէ իր անձին և իր գործոց պաշտպանու-
թեան: Յետոյ կ'անցնի Պօղոս Առաքեալի
անցեալէն իրեն քաջախիւրութեան համար,
պատճառաբանել թէ ինչու համար հոգեւոր
մշակն, անօթն ընտրութեան, որ ըսաւ.
«Նմանազք եղբուք ինձ, որպէս և ես Քրիս-
տոսի» այս, իրեն ունեցած մեծ շնորհքին
համար, իրեն դէմ մատացողներուն նկատ-
մամբ, որոնք նորազարձ աշակերտներուն
միտքը պղտորելու համար, անմիտ լուրեր
կը համբաւէին, զի՞ծեալ սրտով կը յարձակի
անոնց վրայ, սուտ մշակ կը կոչէ, և Քրիս-
տոսի խրատէն գուրս ելաւ, և իւր անձի
զովեւտը մեծ պարծանքով գրեց զրկեց ա-
շակերտներուն, և սակայն այդ վարմունքին
համար ոչ ոք մեղադրեց զՊօղոս, և մնաց
միշտ իւր պայծառ պապկի մէջ. բայց Պօղոս
ոչ թէ ախորժելով կը գրէ, այլ անզգամու-
թեամբ, և կը յանդիմանէ իւր աշակեր-
տածները թէ Ղուք ստիպեցի՞ք զիս անզգա-
միլ, որովհետեւ ախորժելով կը լսէիք անոնց
անմիտ խօսքերը: Ղազար իւր թշնամիե-
րուն կ'ըսէ ինչու այս այսպէս եղաւ, թող
հասկացողն քննէ իմանայ թէ կրնայ, ասպա
թէ ոչ թող լռեն:

Յետոյ վերագառնալով առ Վահան զո-
վեստի խօսքերով, կը յանձնարարէ անոր
արդարահայեաց և կշռաքնին դատաստանին՝
իր անձին ջատագովութիւնը յորում հարկ
պիտի ըլլայ զրպարտութեանց դէմ: Գնել
ինչ որ ըրեր է, և ինչ որ իւր ականջով լսե-
ր է. իրաւ է որ պարծենկոտութեամբ կը գրէ,
սակայն ըստ Ս. Պօղոսի կը բողոքէ իր ան-
զգամութեան դէմ. որով ըրած ջատագո-
վութիւնը ոչ թէ ուրախութեամբ՝ այլ «սա-
նեղել սրտիս»:

«Արդ զու, Տէր, այր քաղցր ես և խոնար-
համիտ և արգարահայեաց և կշռաքնին, և
հաւատոյ Աստուծոյ առաւել ընտանի՝ որպէս
և ամենայն նախնիքն քո: Եւ ես անպիտանս

և ամենեցուն կղկղանք՝ թէպէտ և երեւի-
ցիմ՝ առաջի Տեսանդ՝ ԱՌ ՆԵՂԵԼ ՍՐՏԻՍ՝,
իրեւ. զանզգամ՝ որպէս մեծ առաքեալն
Պօղոս. այլ քո Տեսան՝ քրիստոսանմանու-
թեամբ տարեալ՝ ներելով անզգամութեանս
իմում, ընկալ զիս իրեւ. զանզգամ»:

Այս ասացուածքին երկու ուրիշ տեղ կը
հանդիպինք նոյն գրքի մէջ:

Երբ հայ նախարարներու ոմանց վատ
մատնութեամբ խոսքով կը բանտարկուի
յԱյնուշ բերդին, իսկ Ս. Սահակ գահընկէց
կը լինի կաթողիկոսական աթոռէն, և երբ
նոյն նախարարները զգլալով կը զիմեն առ
Ս. Հայրապետն դառնալու իւր աթոռը, նա
կը մերժէ՝ յանդիմանելով անոնց ապերախ-
տութիւնն, և երբ շատ կը ստիպեն և կը
նեղեն, Ս. Հայրապետն դառնացած սրտով
կը պատմէ անոնց իւր տեսիլքը:

«Երթալք յինէն ի բաց, և թոյլ տուք
ինձ ողբալ զընդհանուր կորուստ աշխարհիս
Հայոց, զոր տեսանեմ աշօք մտացո ի զո-
րութենէ վերին ցուցակութեանն, մի բըռ-
նադատէք միսիթարել զիս ի վերայ բեկման
ժողովրդեան իմոյ:.....

«Զոր և ձեզ պատմել այսօր բռնադատիմ
ԱՌ ՆԵՂԵԼ ՍՐՏԻՍ՝ ԻՄՈՑ, և ցուցանիմ ան-
զգամ, որպէս և սուրբ Առաքեալն Աստու-
ծոյ Պօղոս, որ յաղագս սուտ առաքելոցն
և անօրէն մշակուցն գրեաց պարծելով առ
Կորնթացիս, զիւր ճգնութեանցն զհան-
դէսն» (էջ 87. տպ. 1891, Վիննաիկ):

Երկրորդ անգամ. «Եւ արդ պատմեցի
ձեզ ոչ միայն ԱՌ ՆԵՂԵԼ ՍՐՏԻՍ, այլ և
թաքուցանիլ երկուցեալ, եւն» (էջ 112,
տող 22):

Հ. Գ. ՆԱԼԱԳԵՏԱՆ

1. յօր. Տեսան;
2. յօր. Առն եղեւ որդի;
3. Մեր սրբազորութեան ի նպաստ կարող էինք կոչել
և Էջմ. Մանգր. Թիւ 611 (Գփօրդ. ցուց.) Զ. Ի արդի ըն-
թերցումը, անս. Ղ. Փարպեցուհի հր. Տփղիս 1904, էջ 187.